Մասնագիտական կրթական ծրագրի ընդհանուր նկարագիր	
Ծրագրի անվանումը	041401.01.7 Շուկայագիտություն
Ընդհանուր նկարագրությունը	Ծրագրի նպատակն է. Զարգացնել ուսանողների մասնագիտական կարողությունները՝ տրամադրելով խորացված գիտելիքներ սպորտ մարքեթինգի ոլորտում, ապահովել ուսանողներին անհրաժեշտ տեսական գիտելիքներով և տեղեկատվությամբ տեղական և միջազգային սպորտի շուկայի վերաբերյալ՝ մարքեթինգային հետազոտություններ կատարելու և ռազմավարություններ մշակելու նպատակով: Ուսանողներին ծանոթացնել սպորտի ոլորտում բիզնեսի վարման կարևորագույն դիսցիպլիններին և գործառույթներին: Ծանոթացնել սպորտի մարքեթինգի ոլորտի հետազոտական արդի մեթոդներին և տեխնոլոգիաներին: Ուսուցումն իրականացվում է մոդուլային ծրագրով: Ուսումնական տարին բաղկացած է ուսումնական գործընթացի 4 մոդուլներից, իսկ ուսումնական կիսամյակը՝ 2:
Ուսումնական պլանը	https://tinyurl.com/4ps2w4wf
Շնորհվող աստիճանը	Կառավարման մագիստրոս
ՈԱՇ մակարդակը	Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ
Կրեդիտները	60
Ուսուցման ձևը	Առկա
Ծրագրի տևողությունը	1 տարի
Դասավանդման լեզուն	Հայերեն
Ուսման վարձը	600 000 ՀՀ դրամ
Վերջնարդյունքը	Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Ա.1. Սահմանել ոլորտի առանցքային հասկացությունները, առաջավոր սկզբունքները և մեթոդները: Ա.2. Թվարկել մարքեթինգային հետազոտության տեսակները, դրանց արդյունավետությունը: Ա.3. Մեկնաբանել մասնագիտական ոլորտի տարբեր օղակները կարգավորող իրավական ֆինանսական և էթիկայի նորմերը: Ա.4. Քննարկել ոլորտի միտումները, ինչպես նաև գլոբալիզացիայի ազդեցությունը սպորտի վրա: Ա.5. Դիտարկել սպորտ ինդուստրիայի շուկան մարքեթինգի տեսանկունից:

	Բ. Մասնագիտական գործնական կարողություններ և հմտություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Բ.1. Վերլուծել հենքային մասնագիտական տեղեկատվությունը, շուկայում իրավիճակը, առաջադրել սպորտի ոլորտում մարքեթինգի արդյունավետ ռազմավարություններ, զարգացման ծրագրեր և նախագծեր: Բ.2. Վերլուծել մարքեթինգային նպատակը և վերջինիս հիման վրա մշակել ռազմավարական խնդիրներ: Բ.3. Մշակել արդի մարտահրավերներին համապատասխան ծրագրեր, կիրառել SWOT և PESTEL հետազոտություններ սպորտի ոլորտում տարբեր իրավիճակների համար: Բ.4. Վերլուծել շուկայի, սպառողների, սպորտային ծառայությունների և ապրանքների ֆինանսավորման և կառավարման հիմնախնդիրները: Բ.5. Մշակել սպորտային խանութի ներքին և արտաքին միջավայրերի մերչնդայզինգի կոնցեպտուալ պլանավորում: Բ.6. Համադրել մասնագիտական ոլորտի ներքին և արտաքին գործոնները, և կատարել համապատասխան մարքեթինգային վերլուծություններ: Բ.7. Քննադատել ոլորտում առկա թերությունները, փաստերի հիման վրա մասնակցել բանավեճերի: Բ.8. Վերլուծել ոլորտի ժամանակակից միտումները: Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի Գ.1. Տիրապետել մայրենի և օտար լեզվով ոլորտի հիմնական տերմինաբանությանը, բանավոր և գրավոր հաղորդակցվել մասնագիտական հանրության հետ: Գ.2. Որոնել ակադեմիական գրականություն, մեկնաբանել, հղումներ կատարել, համացանցային տեղեկատվությունը զտել և հավաքագրել: Գ.3. Կառուցել ինտերակտիվ մեխանիզմներ թիմային աշխատանքների կազմակերպման համար: Գ.4. Իր գործունեությունը կառուցելու՝ հիմնվելով համամարդկային բարոյական արժեքների և մասնագիտության էթիկական նորմերի վրա:
Աշխատաշուկան	Պետական և մունիցիպալ կառավարման ոլորտում ԿԳՍՄՆ Պրոֆեսիոնալ սպորտային ակումբներում Ֆեդերացիաների մարքեթինգի, գովազդի և PR բաժիններում Իրադարձությունների կառավարման ոլորտում Մասայական մարզաառողջարարական կենտրոններում Առևտրային և ոչ առևտրային սպորտային կազմակերպություններում Մարզակառույցների կառավարման համակարգում